

Հաստատված է

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կոլեգիալ
կառավարման խորհրդի թիվ 2 06.02.2023 թ նիստում
խորհրդի նախագահ՝ [Signature] /Ա. Նաջարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
/պետական ոչ առևտրային կազմակերպություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ք. Գյումրի

2023թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի /այսուհետ Քոլեջ/ ուսանողական խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/ ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական հասարակական միավորում է:

1.2. Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը ՀՀ օրենսդրությանը համապատասխան սահմանվում է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ղեկավար մարմինների ակտերով և սույն կանոնակարգով:

1.3.Խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և բուհական կրթություն ստացողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4.Քոլեջի ղեկավար մարմինների, ստորաբաժանումների, քոլեջում գործող, ինչպես նաև արտաքոլեջային կրթական, մշակութային , հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների ու անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերությունները կառուցվում են իրավահավասարության և փոխադարձ պայմանավորվածությունների Քոլեջի և սույն կանոնակարգի հիման վրա:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1.Խորհուրդը՝

ա/ ապահովում է Քոլեջի ինքնակառավարման և ուսանողական ինքնավարության գործընթացների ծավալումն ու զարգացումը, նպաստում ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների իրավունքների և պարտականությունների պատշաճ և անթերի կատարմանը,

բ/մասնակցում է ուսումնակրթական գործընթացների, ուսումնադաստիարակչական աշխատանքների, ուսանողական գիտական գործունեության կազմակերպմանը,

գ/նպաստում է ուսանողության ստեղծագործական, ինտելեկտուալ, մշակութային ու հոգևոր զարգացմանը, ուսանողության առօրյայի , հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանը,

դ/հաստատում է կապեր ու գործնական փոխհարաբերություններ ՀՀ և արտերկրի ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ,

ե/ հնարավորության դեպքում իրականացնում է սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր, նպաստում կենցաղային ու սոցիալական պայմանների բարելավմանը:

2.2. Խորհուրդը մշակում և Քոլեջի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:

3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Խորհուրդն իր գործունեությունը կառուցում է ելնելով իր նպատակներից ու խնդիրներից:

3.2. Խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տնօրինել իրեն տրամադրված գույքը:

3.3. Խորհուրդը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով:

3.4. Խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնադրությամբ նախատեսված կարգով մասնակցում է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարմանը:

3.5. Խորհրդի ղեկավար մարմիններն են՝

ա/ ընդհանուր ժողովը՝

բ/ նախագահությունը

գ/ նախագահը

3.6. Ընդհանուր ժողովը Խորհրդի բարձրագույն ղեկավար մարմինն է:

3.7. Ընդհանուր ժողովին մասնակցում են ստորաբաժանումների խորհուրդների ներկայացուցիչները՝ Խորհրդի գործող նախագահի կողմից հաստատված համամասնությամբ՝ նախագահության ներկայացմամբ:

3.8. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

3.9. Ժողովը գումարվում է տարին երեք անգամ, այն իրավասու է, եթե նրան մասնակցում են գրանցված ներկայացուցիչների կեսից ավելին:

3.10. Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Խորհրդի նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 2/3-ի առաջարկությամբ:

3.11. Ընդհանուր ժողովը՝

ա/ ընդունում է Նախագահության կողմից առաջադրված կանոնակարգը կամ կանոնակարգի փոփոխությունները, որը հաստատվում է քոլեջի կառավարման խորհրդի կողմից,

բ/ քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր

գ/ ընտրում է Խորհրդի նախագահին, երկու տեղակալներին, քարտուղարին, որոնք հանձնաժողովների և ակումբների նախագահների հետ կազմում են նախագահություն,

դ/ լսում է նախագահության հաշվետվությունը ժողովից ժողով ընկաց ժամանակահատվածում Խորհրդի կատարած աշխատանքների մասին:

3.12. Խորհրդի լիազորությունների ժամկետը երեք տարի է : Ընտրություններն անց են կացվում երեք տարին մեկ անգամ:

3.13. Խորհրդի նախագահը՝

ա/ ղեկավարում է Խորհրդի աշխատանքները, վարում նախագահության նիստերը, ստորագրում ընդունված որոշումները,

բ/ ներկայացնում է Խորհուրդը քոլեջի վարչական մարմիններում և քոլեջից դուս փոխհարաբերություններում,

գ/ ընդունում է որոշումներ, տալիս հանձնարարականներ և կարգադրություններ, հրավիրում է Խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողություն,

դ/ առաջադրում է հանձնաժողովների ու ակումբների նախագահների թեկնածությունը, որը հաստատվում է նախագահության կողմից

ե/ տարին մեկ անգամ տնօրենի առջև հանդես գալիս Խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ,

զ/ ընտրվում է ընդհանուր ժողովում երեք տարի ժամկետով ձայների պարզ մեծամասնությամբ,

է/իրականացնում է ստահմանված կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

3.14. Խորհրդի նախագահի տեղակալներից յուրաքանչյուրը զբաղվում է որոշակի թվով ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացմամբ:

3.15. Խորհրդի քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

3.16. Խորհրդի նախագահությունը՝

ա/ կոորդինացնում է ստորաբաժանումների Խորհուրդների գործունեությունը,

բ/ առաջադրում է ներկայացուցիչներ քոլեջի գիտական Խորհրդի և կառավարման Խորհրդի կազմում,

գ/ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է Խորհրդի աշխատանքների ղեկավարումը,

դ/իր գործունեությունը ծավալում է երեք տարի ժամանակով՝ մինչև նոր ընտրությունները,

ե/ դադարեցնում է իր լիազորությունները ժամկետից շուտ ընդհանուր ժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

3.17. Խորհրդի հանձնաժողովներն են՝

ա/ մշակույթի

բ/ սոցիալական

գ/ արտաքին կապերի

դ/ սպորտի

ե/ կազմակերպչական

զ/ լրատվական

3.18. Նշված ոլորտներին չառնչվող կարևոր այլ հարցերով զբաղվելու համար նախագահությունը կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

3.19. Հանձնաժողովներն իրենք են որոշում իրենց նիստերի գումարման պարբերականությունը, դրանց ժամկետներն ու անհրաժեշտությունը

3.20. Խորհրդում գործում են նաև ակումբներ , որոնք են՝

ա/ ինտելեկտուալ

բ/ բնապահպանության և առողջ ապրելակերպի

գ/ բանավեճի

3.21. ՌԽսանողական խորհուրդը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով: Նրա անդամներն ընտրվում են կուրսերի ժողովներում:

3.22. ՌԽսանողական խորհուրդը պարբերաբար ամփոփում է կուրսերի ընթացիկ առաջադիմություններն ու հաճախումները, կազմակերպում է միջկուրսային ստուգատեսմրցույթներ, հանդիպումներ և այլն:

3.23 ՌԽսանողական խորհուրդը նախագահության անդամների ընդհանուր թվի 2/3-ի պահանջով կարող է հրավիրել արտահերթ նիստ:

3.24 ՌԽսանողական խորհուրդը կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել նաև ֆակուլտետային խորհրդի անդամ չհանդիսացող անդամներ:

3.25 ՌԽսանողական խորհրդի անդամների կեսից ավելին որոշմամբ քվերակությամբ ընտրում են ուսանողական խորհրդի նախագահին, տեղակալին և անդամներին:

3.26. ՌԽսանողական խորհրդի նախագահը, նրա տեղակալները ու քարտուղարը ի պաշտոնե քոլեջի ուսանողական խորհրդի անդամներ են:

3.27. Խորհրդի ղեկավար մարմիններն ընտրվում են երեք տարի ժամանակով: Խորհրդի նախագահությունն իր լիազորությունները դադարեցնում է ուսանողական խորհրդի անդամների 2/3 որոշմամբ կամ քոլեջի Խորհրդի նախագահության որոշմամբ իրեն տրված պարտականությունները չկատարելու դեպքում:

3.28. Խորհրդի նախագահությունը որոշում է կուրսերից խորհրդի անդամների ընտրության համամասնությունը յուրաքանչյուր կուրսից ոչ ավել, քան մեկ հոգի:

3.29. Կուրսային խորհրդի անդամներից մեկը ընտրվում է կուրսի խորհրդի նախագահ: Կուրսային խորհրդի անդամներն իրենց լիազորությունները վայր են դնում կուրսի անդամների կեսից ավելի որոշմամբ:

3.30 Կուրսի խորհրդի նախագահը հրավիրում և նախագահում է կուրսի ժողովները ինչպես նաև հետևում ժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին:

3.31 Կուրսի խորհուրդը հարց է բարձրացնում ուսանողական խորհրդի առջև՝ ուսանողներին խրախուսելու և համապատասխան տույժի ենթարկելու համար:

3.32 Կուրսի խորհրդի լիազորությունների ժամկետը սահմանվում է երեք տարի:

4. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

4.1. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի գործունեությունը դադարում է ՀՀ օրենքներին համապատասխան, ինչպես նաև Խորհրդի ընդհանուր ժողովի թվի 2/3-ի որոշմամբ: